Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՄՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 25 - ԱՄՅԱ

ԵՐԵՎԱՆ 2023

Ի. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 16.02.2021թ., հիմնադիր ժողովի (արձանագրություն N 1) որոշմամբ:

Կազմակերպության պետական գրանցման համարն է՝ 211.171.1164446:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպության նպատակներն են.

1) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում բոլոր մարզաձևերի (օլիմպիական և ոչ օլիմպիական, անհատական և խաղային) զարգացմանը նպաստելը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջ ապրելակերպի քարոզումը.

2) բոլոր մարզաձևից բարձր որակավորում ունեցող մարզիչների և մարզիկների պատրաստմանը աջակցելը.

3) մանկապատանեկան սպորտի զարգացմանը նպաստելը.

4) խաղային և անհատական մարզաձևերի զարգացմանը նպաստելը և աջակցելը.

5) բակային սպորտի զարգացմանը նպաստելը և աջակցելը.

6) մարզիկների և մարզիչների կեցության ապահովումը ուսումնամարզական հավաքների, մարզումների ժամանակ:

«Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպության խնդիրներն են.

1) իրականացնում է մարզաձևերի զարգացման համատեղ ծրագրեր Հայաստանի և օտարերկրյա մարզական ուղղվածության կազմակերպությունների հետ.

2) իրականացնում է մարզաձևերի զարգացման ծրագրեր՝ դրամաշնորհային միջոցների հաշվին.

3) իրականացնում է մանկապատանեկան սպորտային և մարզական ծրագրեր.

4) նպաստում է խաղային և անհատական մարզաձևերի զարգացմանը՝ իրականացվող ծրագրերի միջոցով.

5) նպաստում է բակային սպորտի զարգացմանը.

6) կազմակերպում է մարզիկների և մարզիչների կեցության ապահովումը՝ ուսումնամարզական հավաքների, մարզումների ժամանակ.

7) համագործակցում է այլ պետությունների նմանաբնույթ կազմակերպությունների հետ.

8) համագործակցում է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի, պետական և ոչ պետական մարմինների, կազմակերպությունների հետ:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ՄՕԿ-ի Օլիմպիական խարտիայով, «Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

«Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3 Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. Ղեկավար կազմ.

«Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպության նախագահ՝ Ռոման Ամոյան- Աշխարհի գավաթի անհատական չեմպիոն, Եվրոպայի կրկնակի չեմպիոն, 2008թ. Օլիմպիական խաղերի մեդալակիր

«Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպության գլխավոր քարտուղար՝ Մալխաս Ամոյան- աշխարհի և Եվրոպայի երիտասարդների չեմպիոն

«Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպության փոխնախագահ՝ Վախթանգ Դարչինյան - Պրոֆեսիոնալ բոքսի իննակի աշխարհի չեմպիոն

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

«Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպության գործունեության ոլորտներն են՝

1) մարզաձևերի զարգացման համատեղ ծրագրերի իրականացումը՝ Հայաստանի և օտարերկրյա մարզական ուղղվածության կազմակերպությունների հետ.

2) մարզաձևերի զարգացման ծրագրերի իրականացումը.

3) մանկապատանեկան սպորտային և մարզական ծրագրեր իրականացումը.

4) խաղային և անհատական մարզաձևերի զարգացմանը նպաստելը՝ իրականացվող ծրագրերի միջոցով.

5) բակային սպորտի զարգացմանը նպաստելը.

6) մարզիկների և մարզիչների կեցության կազմակերպումը՝ ուսումնամարզական հավաքների, մարզումների ժամանակ.

7) այլ պետությունների նմանաբնույթ կազմակերպությունների հետ համագործակցությունը.

8) Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի, պետական և ոչ պետական մարմինների, կազմակերպությունների հետ համագործակցությունը.

9) մարզամշակութային և մարզական միջոցառումների կազմակերպումը և անցկացնումը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է «Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպության կողմից ՀՀ, Երևան քաղաք, Արաբկիր, Կոմիտաս պողոտա 37 /Ռաֆֆու անվան հ. 36 հիմնական դպրոց/ հասցեում գտնվող Ռաֆֆու անվան հ. 36 հիմնական դպրոցի 3-րդ մասնաշենքը և օժանդակ կառույցների (դալան՝ մուտք-ելքը Կոմիտաս պողոտա ապահովելու համար) (այսուհետ՝ Մասնաշենք) հիմնանորոգման աշխատանքների իրականացումը, ինչը էապես կբարձրացնի պետական սեփականություն հանդիսացող Մասնաշենքի շուկայական արժեքը, որը թույլ կտա Երևան քաղաքում ունենալ ժամանակակից չափանիշերին և պահանջներին համապատասխանող մարզահամալիր (ըմբշամարտի, բռնցքամարտի, խաղային մարզաձևերի մարզադահլիճներ, հրաձգարան, լողավազան, ֆիթնեսի դահլիճ, մարզիկների և մարզիչների կեցավայր ուսումնամարզական հավաքների ժամանակ և այլն), ապա այն որպես մարզահամալիր շահագործումը: Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանները կունենան ժամանակակից պայմաններին համապատասխանող ըմբշամարտի, բռնցքամարտի, խաղային մարզաձևերի մարզադահլիճներ, հրաձգարան, լողավազան, ֆիթնեսի դահլիճ, մարզիկների և մարզիչների կեցավայր:

Երևան քաղաքում հիմնանորոգված, ժամանակակից պահանջներին համապատասխանող մարզահամալիրից (մենպայքարային և խաղային մարզաձևերի դահլիճներ, հրաձգարան, լողավազան և այլն) կարող են օգտվել տարեկան շուրջ 2000 շահառուներ՝ մանկապատանեկան տարիքից սկսած, կբացվեն նոր աշխատատեղեր:

Ռաֆֆու անվան հ. 36 հիմնական դպրոցը անհատույց կօգտվի ֆիզիկական կուլտուրայի դասաժամերի անցկացման համար հիմնանորոգված և ժամանակակից պայմաններին համապատասխանող մարզադահլիճներից:

2.2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 25 տարիների համար կազմակերպության գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

- Նվիրատվությունները՝ Ռոման Ամոյանի անձնական միջոցներից, մարզահամալիրի շահագործումից ստացված միջոցներից, այլ անհատներից և կազմակերպություններից՝ առկայության դեպքում (Ծրագրի ներդրման չափը՝ 373 մլն (երեք հարյուր յոթանասուներեք միլիոն) << դրամ:

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 25 տարվա ընթացքում:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 25 տարիներին «Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1-ին տարվա ընթացքում՝

Մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ սահմանված կարգով նախագծային փաստաթղթերի մշակում, նախագծային փաստաթղթերի փորձաքննություն և հաստատում (անհրաժեշտության դեպքում):

Մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում, քանդման աշխատանքներ, տանիքի կապիտալ հիմնանորոգում, հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում ըմբշամարտի դահլիճի և խաղային մարզաձևերի դահլիճի հիմնման աշխատանքներ:

2-րդ տարվա ընթացքում՝

Մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների շարունակում, քանդման աշխատանքներ, տանիքի հիմնանորոգման շարունակում, հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում ըմբշամարտի դահլիճի և խաղային մարզաձևերի դահլիճի հիմնման աշխատանքների շարունակում ու շահագործում:

3-րդ տարվա ընթացքում՝

Մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների շարունակում, քանդման աշխատանքներ, հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում բռնցքամարտ մարզաձևի դահլիճի հիմնում և շահագործում:

4-րդ տարվա ընթացքում՝

Մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների շարունակում, հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում ֆիթնեսի դահլիճի հիմնում, կահավորում և շահագործում:

5-րդ տարվա ընթացքում՝

Մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների շարունակում, հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում հրաձգարանի հիմնանորոգում, կահավորում և շահագործում:

6-րդ տարվա ընթացքում՝

Մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների շարունակում: Սեյսմիկ անվտանգության դրական եզրակացության դեպքում՝ քանդման աշխատանքներ, հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում լողավազանի հիմնում: Սեյսմիկ անվտանգության դրական եզրակացության բացակայության դեպքում՝ այլ մենապայքարային մարզաձևի դահլիճի և/կամ մշակութային դահլիճի հիմնում և շահագործում

7-րդ տարվա ընթացքում՝

Մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների շարունակում: Սեյսմիկ անվտանգության դրական եզրակացության դեպքում՝ հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում լողավազանի հիմնման շարունակում, կահավորում և շահագործում: Սեյսմիկ անվտանգության դրական եզրակացության բացակայության դեպքում՝ այլ մենապայքարային մարզաձևի դահլիճի և/կամ մշակութային դահլիճի հիմնում և շահագործում:

8-րդ տարվա ընթացքում՝

Մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների շարունակում: Հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում և բարեկարգում: Մարզահամալիրի շահագործում:

9-րդ տարվա ընթացքում՝

Մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների շարունակում: Մարզահամալիրի շահագործում:

10-րդ տարվա ընթացքում՝

Մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների շարունակում: Մարզահամալիրի շահագործում:

11-րդ և հաջորդող n-րդ տարիների ընթացքում ՝

Մարզահամալիրի շահագործում:

Առաջարկվող ներդրումները բաշխվում են հետևյալ կերպ՝

-Ծրագրի 1-ին տարվա ընթացքում հիմնանորոգման համար՝ 60 մլն (վաթսուն միլիոն) ՀՀ դրամի չափով

- Ծրագրի 2-րդ տարվա ընթացքում հիմնանորոգման համար՝ 53 մլն (հիսուներեք միլիոն) ՀՀ դրամի չափով.

- Ծրագրի 3-րդ տարվա ընթացքում հիմնանորոգման համար՝ 50 մլն (հիսուն միլիոն) ՀՀ դրամի չափով.

-Ծրագրի 4-րդ տարվա ընթացքում հիմնանորոգման համար՝ 30 մլն (երեսուն միլիոն) ՀՀ դրամի չափով.

-Ծրագրի 5-րդ տարվա ընթացքում հիմնանորոգման համար՝ 30 մլն (երեսուն միլիոն) ՀՀ դրամի չափով.

-Ծրագրի 6-րդ տարվա ընթացքում հիմնանորոգման համար՝ 50 մլն (հիսուն միլիոն) ՀՀ դրամի չափով.

-Ծրագրի 7-րդ տարվա ընթացքում հիմնանորոգման համար՝ 30 մլն (երեսուն միլիոն) ՀՀ դրամի չափով.

-Ծրագրի 8-րդ տարվա ընթացքում հիմնանորոգման համար՝ 30 մլն (երեսուն միլիոն) ՀՀ դրամի չափով.)

-Ծրագրի 9-րդ տարվա ընթացքում հիմնանորոգման համար՝ 20 մլն (քսան միլիոն) ՀՀ դրամի չափով.)

-Ծրագրի 10-րդ տարվա ընթացքում հիմնանորոգման համար՝ 20 մլն (քսան միլիոն) ՀՀ դրամի չափով.):

Կազմակերպությունն իրավունք ունի 1-ին ից մինչև 10-րդ տարվա առաջարկվող ներդրումները կատարել առաջարկվող ժամկետից շուտ:

2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ ՀՀ, Երևան քաղաք, Արաբկիր, Կոմիտաս պողոտա 37 հասցեում գտնվող Ռաֆֆու անվան հ. 36 հիմնական դպրոցի 3-րդ մասնաշենքը և օժանդակ կառույցների (Մասնաշենք) հիմնանորոգման աշխատանքների իրականացման արդյունքում էապես կբարձրանա պետական սեփականություն հանդիսացող Մասնաշենքի շուկայական արժեքը:

Երևան համայնքը կունենա ժամանակակից պահանջներին համապատասխանող մարզադահլիճներ, հրաձգարան, լողավազան, կբացվի նվազագույնը 20 աշխատատեղ, մարզահամալիրից (շահագործումից հետո) տարեկան կարող են օգտվել թվով 2000 շահառուներ: Մարզահամալիրի շահագործումը կիրականացվի ներդրողի՝ «Ամոյան եղբայրների անվան մարզահամալիր» հասարակական կազմակերպության կողմից:

Երևանի Ռաֆֆու անվան հ. 36 հիմնական դպրոցի բոլոր աշակերտները անխտիր իրենց ֆիզիկական կուլտուրայի դասաժամերը կանցկացնեն մարզահամալիրի հիմնանորոգված մարզադահլիճներում՝ անհատույց, յուրաքանչյուր երկուշաբթիից-ուրբաթ (դպրոցի կողմից վեցօրյա ուսումնական շաբաթ սահմանվելու դեպքում՝ երկուշաբթիից-շաբաթ) օրերին, առավոտյան 8:30-14:30 ժամանակահատվածում, բացի ուսումնական՝ ամառային և ձմեռային արձակուրդների օրերից: